# Հաշվետվություն

## 2019/2020 ուս. տարվա կտրվածքով

## առկա և հեռակա համակարգերում սովորող

## ուսանողների կողմից դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ

## դասախոսների գնահատման

**Հետազոտության նպատակը և խնդիրները**

2019/2020 ուս. տարվա ընթացքում «Հյուսիսային համալսարանում որակի բարելավման, որակյալ բարձրագույն կրթության ապահովման նպատակով ուսանողների կողմից դասախոսների դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ գնահատման» կարգի համաձայն (տես հավելված 1-ը, որում առավել մանրամասն ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները) անցկացվեց դասախոսների դասավանդման որակի և արդյունավետության գնահատում: Որակի ապահովման վարչությունը ի թիվս մյուս կարևոր հիմնախնդիրների, առանձնակի ուշադրության է արժանանում ուսանողների կողմից դասախոսների, ամբիոնների ու ֆակուլտետների գործունեությանը տրվող գնահատականներին:

Հարցումների արդյունքների ընդհանրացումը նաև բուհի գործունեության արդյունավետության յուրովի գնահատականներից մեկն է:

**Հետազոտության տեսակը**՝ գրավոր հարցում:

**Հարցման ընթացակարգ**

Հարցումներն իրականացվել են օֆլայն՝ լսարանային պայմաններում, ուսանողներին հարցաթերթիկներ տրամադրելով: Հետազոտության արդյունքների օբեկտիվությունն բարձրացնելու նպատակով հարցումներն ուղղեկցվել են գիտափորձի այլ մեթոդներով: Իրականացնող մասնագետի կողմից ուսանողներին տրամադրվել է մանրամասն տեղեկատվություն հարցման նպատակի և արդյունքների պատճառահետևանքային կապի մասին՝ բարձրացնելով ուսանողների մոտիվացվածությունը հարցման հանդեպ լուրջ մոտեցման և ադեկվատ գնահատման համար:

**Կիրառվող հարցաթերթիկը**

Որակի վարչության կողմից մշակված՝ կարգում առկա հարցաշարի արդիականությունը ապահովելու նպատակով հարցաթերթիկը վերանայվել է բազմամասնագիտական թիմի կողմից՝ ենթարկվել որոշակի փոփոխությունների:

Պիլոտային փուլում տրամադրվել է փոքրաթիվ ուսանողների, լրացման ընթացքում ծագած հարցադրումների և խնդիրների շրջանակում կրկին բարելավվել է, որից հետո ծառայել է հարցումներին:

Հարցաթերթիկը բաղկացած է **19**–հարցից (տես հավելված 2) որոնք միտված են բացահայտելու մանկավարժական, մասնագիտական և անձնային այնպիսի որակներ որոնք առանցքային են կրթության որակի արդյունավետության բարձրացման համար: Գնահատումն իրականացվում է 4 բալանի համակարգով (1, 2, 3, 4, որոնցից ամենաբարձրը 4, իսկ ամենացածրը 1 միավորներն են):

**Գործողության նկարագիր**

Ուսանողները յուրաքանչյուր հաջորդ կիսամյակի ընթացքում գնահատում են նախորդ կիսամյակում անցած բոլոր դասընթացների դասավանդողների մասնագիտական, անձնային ու մանկավարժական որակները (հետևաբար յուրովի, որպես ընդհանրացված արդյունք՝ նաև ամբիոնի գործունեությունը):

**Հարցման մասնակիցների ընտրանքը**

Հարցմանը մասնակցել են 580 ուսանող, համալսարանում գործող բոլոր հինգ ամբիոններից, այդ թվում Ալավերդու մասնաճյուղից: Մասնավորապես սույն հարցմանը մասնակցել են ուսանողության գերակշիռ մասը: Հարցաթերթիկը չի լրացվել միայն այն փոքրաթիվ ուսանողների կողմից, ովքեր հարցումներն անցկացնելուն նախորդող ժամին տարբեր պատճառներով բացակայել են: Հետևաբար, կարելի է տվյալ հարցումները համարել համատարած, ուստի ներկայացուցչության խնդիր չի դրվում:

**Հետազոտության առարկան՝** 2018/2019 ուս. տարվա 2-րդ կիսամյակում առկա և հեռակա համակարգերում դասավանդող դասախոսական կազմ՝ 68 դասախոս:

**Հարցման արդյունքները՝** վերոնշյալ կարգի համաձայն տվյալներն հավաքագրվել և վերլուծվել են որակի վարչության մասնագետների կողմից: Արդյունքներն ենթակա չեն հրապարակման, դրանք պետք է պահպանվեն առաջիկա հինգ տարին որակի վարչության կողմից, որից հետո կհանձնվեն համալսարանի արխիվ: Արդյունքները կտրամադրվեն ամբիոններին և մյուս շահագրգիռ կողմերին, և արդյունքների հիման վրա մյուս քայլերը կիրականացվեն համապատասխան կարգի:

**Հարցման արդյունքների վերլուծություն**

Մինչ հարցման արդյունքների ներկայացնելը հարկ ենք համարում անդրադառնալ այն հանգամանքին, որ սոցիոլոգիայում հասարակական կարծիքի վրա հիմնված հետազոտություններն, որքան էլ օբյեկտիվ արդյունքներ ապահովելու նպատակով համալրված լինեն հետազոտությունների և՛ քանակական, և՛ որակական մեթոդներով, միևնույնն է, դրանց արդյունքները, որպես բացարձակ գնահատում չեն ընդունվում, այլ որպես ընդհանուր գնահատման որոշակի բաղադրիչ (ընդհանուր գնահատման հետ կապված մանրամասներն տե՛ս կարգում): Հասարակական կարծիքի արդյունքներն իրավական ուժ չունեն և նրա ցանկացած շահարկում առանց մյուս բաղադրիչների իրականացման համարվում է բարոյաէթիկական նորմերի ոտնահարում: Հարցումների արդյունքները քննարկելիս պետք է դրսևորվի վերլուծաբանական և քննադատական կոմպետենտություն, հաշվի առնելով արդյունքների վրա պատճառահետևանքային կապի ազդեցությունը, ջանալով ոչ գերագնահատել, և ոչ էլ արժեզրկել արդյունքների արժանահավատությունը: Միաժամանակ, այն պետք է հրապարակվի առավելապես գործի հետ առնչվող անձանց շրջանում և արդյունքների մասին պետք է դատողություններ արվեն բացառապես աշխատանքային էթիկայի շրջանակներում:

Վերլուծության արդյունքները կարող են հիմք ծառայել պրոֆեսորադասախոսական անձնակազմի կոմպետենցիաների զարգացման ուղղությամբ, բուհի կարիքների վերհանման և համապատասխան ծրագրերի մշակման համար:

Ըստ իրականացված հետազոտության արդյունքների վերլուծության 2019/2020 ուս. տարվա 1-ին կիսամյակում դասախոսների վաստակած միավորների միջին թվաբանականը կազմել է **3,2:**

Ստորև ներկայացված են ամփոփ ցուցանիշներ, որոնք ստացվել են անհատական ցուցանիշների՝ մասնավորից ընդհանուր՝ միջին թվաբանականների արդյունքում: Մյուս առավել մանրամասն տվյալներն առկա են կից ներկայացվող (3, 4, 5, 6, 7, 8, 9), հավելվածներում «Microsoft Excel» տարբերակով:

Գնահատմանը մասնակացած համալսարանի բոլոր դասախոսների գնահատման ամփոփ ցուցանիշները

Գծապատկեր 1




Առկա են խնդրահարույց երկու հարց որոնք համեմատականորեն ցածր ցուցանիշ են կազմել գնահատմանը ներգրավված ողջ կազմի միավորների միջին թվաբանականի արդյունքում.

Դրանք են՝

5. Կիրառում է նորագույն տեխնոլոգիաներ

11. Ուսանողներին ներգրավում է գնահատման գործընթացում




<u>Առաջարկություններ</u>

1. Ըստ գծապատկեր 1-ի նվազագույն ցուցանիշով աչքի ընկնող հարցերի շրջանակի նախաձեռել որոշակի միջոցառումներ՝ սեմինար, վերապատրաստում ,հանձնարարական և այլն տվյալ հարցերի խնդրահարուց լինելու հանգամանքները բացահայտելու և հետայսու առավել բարձր ցուցանիշներ արձանագրելու նպատակով:
2. Իրականցնել քննարկում ՊԴ կազմի կողմից վաստակված առավելագույն և նվազագույն միավորների կրողների համար խրախուսման և /կամ հակակշիռ / ներգործության ազդեցության իրականացնելու նպատակով:

Համալսարանի դասախոսների գնահատման ամփոփ ցուցանիշները ըստ առանձին ամբիոնների:

**Տնտեսագիտության և կառավարման ամբիոն**

Խալաթյան Հարություն

Պողոսյան Մարգարիտա

**Իրավագիտության և հասարակագիտական առակաների ամբիոն**

Ներսիսյան Արմեն

Ֆանյան Արմինե**Լեզուների, գրականության և լրագրության ամբիոն**

Հակոբյան Գայանե

Տոնոյան Լիլիթ

**Մանկավարժության և հոգեբանության**

Ղազարյան Լուսինե

Մարկոսյան Նարինե

**Մաթեմատիկայի,.ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոն**

Բարխուդարյան Վահե

**Ալավերդու բաժանմունք**

Կարապետյան Լեյլի

Գծապատկեր 3.



Գծապատկեր 4.




Աշխատանքն իրականցրեցին որակի ապահովման վարչության

գլխավոր մասնագետ՝ Ս.Ավագյանը

մասնագետ Ա .Մուկուչյանը